ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

№ 33/22/24900-2025 **04.08.2025թ.**

«Հետք» մեդիա
«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստան»
ծրագրի թիմի ղեկավար
ԼԻԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ
Էլ. փոստ՝ lians@hetq.am

Ի պատասխան Ձեր 28.07.2025 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն ուղղված հարցման

Հարգելի՛ Լիաննա Սայադյան,

1-2. ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իրականացնում է «Ոչ պետական մամուլի հրատարակում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում մրցութային կարգով աջակցություն է տրվում ազգային փոքրամասնությունների պարբերականներին, ինչպես նաև մշակութային, գրական տպագիր և էլեկտրոնային պարբերականներին:

«Ոչ պետական մամուլի հրատարակում» միջոցառման շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վարած քաղաքականությունն, ընդհանուր առմամբ, միտված է գրականության, արվեստի և առհասարակ մշակույթի լուսաբանմանն ու հանրահռչակմանը:

2008 թվականից գործող «Ոչ պետական մամուլի հրատարակում» միջացառումն ունի 3 ուղղություն՝

1. Ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող տպագիր պարբերականներ
2. Գրական տպագիր և էլեկտրոնային պարբերականներ /այդ թվում՝ մանկապատանեկան/
3. Մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականներ /այդ թվում՝ մանկապատանեկան/

Ծրագիրն իրականացվում է հետևյալ կերպ.

ուղղություններով, որոնք ուսումնասիրում և գնահատում է մասնագիտական խորհուրդը. ցանկի ձևավորումը վերապահված է մասնագիտական խորհրդին: Ֆինանսական աջակցության բաշխումը կատարվում է՝ համաձայն 2019 թվականին «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից հաստատված հրատարակչական և տպագրական աշխատանքների ֆինասական չափորոշիչների կիրառման, ներկայացված նախահաշիվների և նախագծերի բովանդակության համապատասխանության (ծավալ, տպաքանակ, պարբերականություն, հրապարակումների և դիտումների քանակ, ինչպես նաև նախկինում ֆինանսավորում ստացած կազմակերպությունների հաշվետվողականության օրինակելիության):

Այսպիսով՝ ծրագրի շրջանակում դրամաշնորհ է տրվում ոչ պետական մամուլի հետևյալ խմբերի նախագծերին.

1. Հայաստանի Հանրապետությունում գրանցված ազգային փոքրամասնությունների պարբերականներին, որոնք՝
- լուսաբանում են իրենց համայնքի մշակութային և հասարակական կյանքը,
- ներկայացնում են ազգային փոքրամասնության արվեստագետների և գրողների (հատկապես՝ ժամանակակից) ստեղծագործությունները, մշակութային գործունեությունը,
- կազմում և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն են տրամադրում տվյալ ազգային փոքրամասնության շրջանում մշակույթի տարածման, հասարակական խնդիրների լուսաբանման հայեցակարգ և ծրագրեր,
- ծրագրում և իրականացնում են տվյալ համայնքում և համայնքից դուրս պարբերականի տարածմանը միտված քայլեր:

2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Հայաստանում լույս տեսնող գրական տպագիր և էլեկտրոնային պարբերականներին, որոնք՝
- ըստ հրապարակումների ծավալի՝ հրատարակում, հրապարակում են առնվազն ութսուն տոկոս հեղինակային նյութեր,
- հրապարակում, հրատարակում են արվեստագիտական, քննադատական, վերլուծական հոդվածներ,
- ներկայացնում են դեռևս չհրապարակված ստեղծագործություններ, ինչպես նաև նոր ի հայտ եկած հեղինակների աշխատանքներ,
- ունեն իրենց պարբերականի նախագծի բովանդակային հայեցակարգն ու տեսլականը:

Գրական, մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականներին աջակցությունը թույլ է տալիս ավելացնել հեղինակային նյութերի, արվեստագիտական և գրաքննադատական հոդվածների քանակը, հետևաբար՝ խթանում է մամուլի և գրական ժանրերի բազմազանության զարգացումը:

3. Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Հայաստանում լույս տեսնող մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականներին, որոնք՝
- ըստ հրապարակումների ծավալի՝ հրատարակում, հրապարակում են առնվազն ութսուն տոկոս հեղինակային նյութեր,

- հրապարակում են արվեստագիտական, քննադատական, վերլուծական հոդվածներ,
- ներկայացնում են դեռևս չհրապարակված, նոր հեղինակների աշխատանքներ,
- ունեն իրենց պարբերականի նախագծի բովանդակային հայեցակարգն ու տեսլականը:

Գրական, մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականներին աջակցությունը թույլ է տալիս ավելացնել հեղինակային նյութերի, արվեստագիտական և գրաքննադատական հոդվածների քանակը, հետևաբար՝ խթանում է մամուլի և գրական ժանրերի բազմազանության զարգացումը: Մրցույթի արդյունքում ձևավորված ցանկերը հրապարակվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը տրամադրված հատկացումների շրջանակում կատարվում է ««Արմենպրես» պետական լրատվական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսավորումը: ՀՀ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորում է ստանում նաև «Միր» միջպետական հեռուստառադիոընկերությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի ամենամյա ծրագրերի իրականացման համար:

Կից ներկայացնում ենք տեղեկատվություն 2020-2024 թվականներին տրամադրված ֆինանսական հատկացումների և աջակցության վերաբերյալ:

Առդիր՝ 1 ֆայլ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Կատարողներ՝
Արվեստի և գրահրատարակչության ոլորտի ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Սուքիասյան
հեռ.՝ (+374) 010-599-697
Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության տեղեկատվության բաժնի գլխավոր մասնագետ
Նարե Հովհաննիսյան, հեռ.՝ (+374) 010-599-612